ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԾՁԲ-2026/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով տրանսպորտային փոխադրումների ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի կասեցման**

08.06.2026 թվական ք. Գյումրի

Մասնակցում էին՝

Աստղիկ Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ /հանձնաժողովի նախագահ/,

Աննա Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ /անդամ/,

Գրիգոր Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ /անդամ/,

Քարտուղար՝ Զարիկ Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնաժողովը լսեց օրակարգի հետևյալ հարցերը.

<u>**Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**</u>
(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

1. Էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին,
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին:
3. Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին :

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

<u>**1. Գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:**</u>
<u>(զեկուցող՝</u> Ա. Ալեքսանյան)

| Հայտ ներկայացրած մասնակիցներ | 1 /մեկ/ |
|---|---|
| | Ա/Ձ Սարգիս Տոնոյան |

Ընդունել ի գիտություն, որ
Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

**2. Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է**

| Չափաբաժնի համար | Ներկայացված հայտեր | Գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | Ա/Ձ Սարգիս Տոնոյան | 312480 | 0 | 3120480 |

(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը:

Ընդունել ի գիտություն.

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Տվյալներ բացված հայտում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

| N | Կազմակերպություն | Գնահատում | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ Սարգիս Տոնոյան | անբավարար | Մասնակցի հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ: Մասնակիցը հայտի հետ միասին չի ներկայացրել Վարորդների կողմից հաստատած գրավոր համաձայնություն՝ հրավերում նշված երթուղով, հրավերում նշված օրերին և հրավերում նշված ժամերին ծառայության կատարման պատրաստակամության վերաբերյալ: Վարորդների անձնագրերի լուսապատճենները, վարորդական իրավունքի վկայականների լուսապատճենները, տրանսպորտային միջոցների տեխնիկական անձնագրերի լուսապատճենները, տրանսպորտային միջոցը տեխզննություն անցած լինելու |

| | | | |
|---|---|---|---|
| | | | փաստը վկայող փաստաթղթի լուսապատճենները: Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, որ կազմակերպությունը գրանցված է արդարադատության նախարարության պետական ռեգիստրում, ինչպես նաև կազմակերպության տնօրենի անձնագրի լուսապատճեն: |

(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրով կասեցվում է նիստը մասնակցի հայտում արձանագրված իրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները վերացնելու համար:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ — Աստղիկ Ալեքսանյան

անդամներ՝ — Աննա Պետրոսյան

Գրիգոր Գրիգորյան

Համակարգող քարտուղար՝ — Զարիկ Մուրադյան